

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԶԻՄՈՒՄ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ո՞ր համակարգի բաղադրիչները կարելի է առանձնացնել թորման եղանակով.

- ա) ամոնիուսի եիդրօքսիդի ջրային լուծույթի
- բ) պրոպանալի սպիրտային լուծույթի
- շ) կալիուսի քլորիդի ջրային լուծույթի
- դ) բենզոլի և ացետոնի
- ե) մեթանոլի և բութանոլի խառնուրդի

- 1) բ, զ, ե
- 2) ա, զ, դ
- 3) զ, դ, ե
- 4) բ, դ, ե

2 Ո՞ր շարքի բոլոր միացությունների մոլեկուլներում են բացասական լիցք կրող ատոմների էլեկտրոնային բանաձևերը նույնը.

- 1) H_2O , O_2F_2 , CCl_4
- 2) Mg_3P_2 , H_2S , SiH_4
- 3) H_2O , CO_2 , H_2Se
- 4) Na_2O_2 , Na_2S , MgO

3 Միևնույն արտաքին պայմաններում 10 լ ածխածնի (IV) օքսիդի զանգվածը քանի անգամ է մեծ նույն ծավալով հելիումի զանգվածից.

- 1) 11
- 2) 4
- 3) 20
- 4) 22

4 Տրված են հետևյալ էլեկտրոնային բանաձևերը.

ա) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^1$ բ) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^2$ շ) $1s^2 2s^2 2p^6 3s^1 3p^3$ դ) $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^4$:

Հիմնական վիճակում արտաքին էլեկտրոնային շերտում երեք էլեկտրոն ունեցող տարրի ատոմի երրորդ էներգիական մակարդակում ոքքան է թափուր օրբիտալների թիվը.

- 1) 1
- 2) 5
- 3) 2
- 4) 7

5 Ո՞ր գույզ ներառված նյութերի մոլեկուլներում է առկա կովալենտային ոչ քսեռային կապ.

- 1) FeS₂, H₂O₂
- 2) Na₂O₂, NaH
- 3) NH₃, Cl₂
- 4) N₂, PCl₃

6 Բերվածներից ո՞րն է ոչ քսեռային մոլեկուլ ունեցող նյութի բանաձև.

- 1) NH₃
- 2) H₂O
- 3) BeH₂
- 4) HF

(7-8) Ալկինի խտությունն ըստ հելիումի 10 է:

7 Որքա՞ն է ածխաջրածնի մեկ մոլեկուլում ատոմների գումարային թիվը.

- 1) 4
- 2) 10
- 3) 6
- 4) 7

8 Որքա՞ն է այդ ածխաջրածնի 60 գ նմուշի զբաղեցրած ծավալը ($\rho = 300 \text{ Կ}$ գ/լ) շերմաստիճանի և 150 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ Օ/Կ} \cdot \text{մոլ}$).

- 1) 40
- 2) 24,9
- 3) 16,6
- 4) 20

9 Ի՞նչ գործառույթ ունի երկիրդոֆոսֆատ իոնն ըստ $NH_3 + H_2PO_4^- \rightarrow NH_4^+ + HPO_4^{2-}$ կրծատ իոնական հավասարման.

- 1) պրոտոնի ակցեպտոր է
- 2) օքսիդիչ է
- 3) պրոտոնի դոնոր է
- 4) վերականգնիչ է

10

Հետևյալ նյութերից ո՞րն է ջրի հետ թափահարելիս առաջացնում սուսպենզիա.

- 1) կերակրի աղ
- 2) կերոսին
- 3) էթանոլ
- 4) մանրացված կավ

11

Ինչպես կփոխվի $\text{Cl}_2(g) + \text{H}_2(g) = 2\text{HCl}(g)$ ռեակցիայի արագությունը ձնշումը երկու անգամ մեծացնելիս.

- 1) կմեծանա երկու անգամ
- 2) կմեծանա չորս անգամ
- 3) կփոքրանա երկու անգամ
- 4) կփոքրանա չորս անգամ

12

Նշված գործոններից որո՞նք կարող են նատրիումի ացետատի հիդրոլիզի հավասարակշռությունը տեղաշարժել դեպի աջ.

- ա) ջերմաստիճանի բարձրացումը
բ) ջերմաստիճանի իջեցումը
գ) ջրում քիչ քանակությամբ նատրիումի հիդրօքսիդի առկայությունը
դ) ջրում քիչ քանակությամբ աղաթթվի առկայությունը

- 1) ա, գ
- 2) բ, դ
- 3) ա, դ
- 4) բ, գ

13

Ո՞ր դեպքերում փակ անոթում ընթացող $\text{C}(s) + \text{H}_2\text{O}(g) \rightleftharpoons \text{CO}(g) + \text{H}_2(g)$ դարձելի ռեակցիայի արդյունքում հավասարակշռային խառնուրդը կհարստանա ռեակցիայի արգասիքներով.

- 1) ձնշումն անոթում մեծացնելիս
- 2) ձնշումն անոթում փոքրացնելիս
- 3) ածխածնի մակերեսը փոքրացնելիս
- 4) ջրային գոլորշու քանակը պակասեցնելիս

14

Յանկացած քիմիական ռեակցիայի ժամանակ հին կապերը խզվում են ($Q_{խ}$) և առաջանում են նորերը ($Q_{ստաց.}$): Ո՞ր դեպքում քիմիական ռեակցիան կուղեկցվի շերմության կլանումով.

- 1) $Q_{խ} = Q_{ստաց.}$
- 2) $Q_{խ} < Q_{ստաց.}$
- 3) $Q_{խ} > Q_{ստաց.}$
- 4) $Q_{խ} \leq Q_{ստաց.}$

15

Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը, նրա բյուրեղավանդակի տեսակը և նրան բնորոշող ֆիզիկական հատկությունը (սովորական պայմաններում).

Նյութ	Բյուրեղավանդակ	Ֆիզիկական հատկություն
ա) ալմաստ բ) յոդ գ) կերակրի աղ դ) ծծմբաջրածին ե) գրաֆիտ	1) իոնային 2) մետաղային 3) մոլեկուլային 4) ատոմային	Ա) Դժվարահալ, կարծր, հոսանք չհաղորդող Բ) Պինդ, ջրում լավ լուծվող Գ) Պինդ, ցնդող, մետաղական փայլով Դ) Բնորոշ հոտով թունավոր գազ Ե) Ոչ կարծր, դժվարահալ, շերտավոր կառուցվածքով Զ) Պինդ, մանուշակագույն ցնդող Է) Անհոտ, անգույն, անհամ, ջրում քիչ լուծվող գազ

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա4Ա, թ3Գ, զ1Բ, դ3Ե, ե4Ե
- 2) ա4Ա, թ3Գ, զ1Բ, դ3Դ, ե4Ե
- 3) ա2Ա, թ4Զ, զ2Բ, դ3Դ, ե3Ե
- 4) ա4Ե, թ3Գ, զ1Ե, դ4Դ, ե4Ա

16

Ի՞նչ երևույթ կդիտվի, եթե ցինկի քլորիդի ջրային լուծույթի կեկտրուիզի (իներտ կեկտրոդներ) ավարտից հետո կեկտրուիտային գուռում մնացած զանգվածին ավելացվի ավելցուկով նատրիումի հիդրօքսիդի լուծույթ.

- 1) զագի անջատում
- 2) նստվածքի անջատում
- 3) լուծույթի պղտորում
- 4) նստվածքի լուծում

17

Զրային լուծութում ո՞ր զույգ նյութերի փոխազդեցության դեպքում է ստեղծվում թթվային միջավայր.

- 1) $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$ և BaCl_2
- 2) H_2SO_3 և NaOH (ավելցուկ)
- 3) FeCl_2 և Na_2S
- 4) Na_2CO_3 և $\text{Ba}(\text{OH})_2$

18

Հետևյալ միացություններից՝ $^{13}\text{C}^1\text{H}_1^2\text{H}_3$, $^{12}\text{C}^1\text{H}_2^2\text{H}_2$, $^{12}\text{C}^1\text{H}_4$, $^{13}\text{C}^1\text{H}_4$ 16 զ.ա.մ. զանգված ունեցող մերժանի նմուշը ենթարկել են ջերմային քայլայման $1500\text{ }^\circ\text{C}$ պայմաններում: Որքան է ստացված ածխածին պարունակող միացության մոլեկուլում նեյտրոնների գումարային թիվը.

- 1) 8
- 2) 10
- 3) 12
- 4) 6


19

Ո՞րն է սովորական պայմաններում ջրի հեղուկ վիճակում գտնվելու պատճառը.

- 1) իոնային կապերի առկայությունը
- 2) ջրածնային կապերի առկայությունը
- 3) իոն-դիպոլային փոխազդեցությունները
- 4) կովալենտային ոչ բնեուային կապերի առկայությունը


20

Ի՞նչ քանակով (մոլ) վերականգնիչ է մասնակցում 1 մոլ օքսիդիչի վերականգնման գործընթացին՝ ըստ հետևյալ ռեակցիայի ուրվագրի.



- 1) 3
- 2) 1
- 3) 2
- 4) 6

(21-22). Տրված են հետևյալ իոնները.



21

Դրանցից որո՞նք կարող են հայտաբերվել աղաթթվով.

- 1) բ, դ, ե
- 2) ա, բ, զ
- 3) ա, զ, դ
- 4) ա, զ, ե

22

Որքա՞ն է աղաթթվով հայտաբերվող իոնի նստվածքագոյացմամբ ընթացող ռեակցիայի կրծատ իոնային հավասարման գործակիցների գումարը.

- 1) 6
- 2) 5
- 3) 3
- 4) 4


23

Կոշտ ջրի նմուշը պարունակում է 81 մգ/լ կալցիումի հիդրոկարբոնատ և 36 մգ/լ մագնեզիումի սուլֆատ: Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի կարբոնատ է անհրաժեշտ 1 մ³ կոշտ ջրից Ca^{2+} և Mg^{2+} իոնները հեռացնելու համար.

- 1) 31,8
- 2) 42,4
- 3) 53
- 4) 84,8

24

Փակ անոթում մեկ մոլ քանակով Բերթոլեի աղը տարացրել են մանգանի(IV) օքսիդի առկայությամբ մինչև թթվածնի անջատման ավարտը: Հետևյալ կորերից ո՞րն է համապատասխանում ժամանակից կախված Բերթոլեի աղի կշռանք պարունակող անոթի զանգվածի փոփոխությանը.



25

Բոցը դեղին գունավորող մետաղի ո՞ր աղը աղաթթվով մշակելիս կանջատվի 50 % զանգվածային բաժնով ծծումբ պարունակող օքսիդ.

- 1) Na_2SO_4
- 2) Na_2SO_3
- 3) K_2SO_3
- 4) $KHSO_3$

26

Ո՞ր նյութերի հետ կփոխազդի նստվածքը, որն անջատվում է այումինի նիտրատի և նատրիումի կարբոնատի լուծույթները խառնելիս.

- 1) և՝ թթվի, և՝ սպիրտի
- 2) և՝ ջրի, և՝ թթվի
- 3) և՝ ալկալու, և՝ սպիրտի
- 4) և՝ ալկալու, և՝ թթվի

27

Ո՞րն է այումինի ստացման արդյունաբերական եղանակ.

- 1) այումինի քլորիդի հալույթի էլեկտրոլիզը
- 2) այումինի քլորիդի ջրային լուծույթի էլեկտրոլիզը
- 3) կալցիումով բոքսիտի վերականգնումը
- 4) կրիոլիտի և այումինի օքսիդի խառնուրդի հալույթի էլեկտրոլիզը

28

Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների հավասարումների ձախ մասերի ուրվագրերը, ռեակցաների վերջանյութերը և վերականգնումից ստացված մասնիկը:

Ուրվագրեր	Վերջանյութեր	Վերականգնումից ստացված մասնիկ
ա) $\text{Fe} + \text{Cl}_2 \rightarrow$	1) FeCl_2	Ա) Cl^{-1}
բ) $\text{Fe} + \text{HCl} \rightarrow$	2) FeCl_3	Բ) Fe^{+2}
գ) $\text{Cu} + \text{HNO}_3(\text{լ}) \rightarrow$	3) $\text{FeCl}_2 + \text{H}_2$	Գ) Fe^{+3}
դ) $\text{Cu} + \text{HNO}_3(\text{լ}) \rightarrow$	4) $\text{Cu}(\text{NO}_3)_2 + \text{H}_2$	Դ) Cu^{+2}
ե) $\text{PH}_3 + \text{O}_2 \rightarrow$	5) $\text{Cu}(\text{NO}_3)_2 + \text{NO} + \text{H}_2\text{O}$	Ե) N^{+2}
	6) $\text{Cu}(\text{NO}_3)_2 + \text{NO}_2 + \text{H}_2\text{O}$	Զ) N^{+4}
	7) $\text{P}_2\text{O}_5 + \text{H}_2\text{O}$	Է) H°
	8) HPO_3	Ը) O^{-2}
		Թ) P^{+5}

Ո՞րն է ճիշտ պատասխանների շարքը.

- 1) ա2Ա, բ3Է, գ5Ե, դ4Զ, ե7Թ
- 2) ա2Գ, բ2Բ, գ4Ը, դ6Զ ե7Ը
- 3) ա1Ա, բ3Բ, գ4Դ, դ5Ե, ե8Թ
- 4) ա2Ա, բ3Է, գ5Ե, դ6Զ, ե7Ը

29

Տրված են HPO_3 , Ca_3P_2 , P_2O_5 բանաձևերն ունեցող միացությունները: Ո՞ր շարք են ներառված այդ միացությունների և տաք ջրի փոխազդեցությունից ստացվող ֆուսֆոր պարունակող միացությունների բանաձևերը համապատասխան հերթականությամբ.

- 1) H_3PO_4 , P_2O_5 , H_3PO_3
- 2) H_3PO_4 , PH_3 , H_3PO_4
- 3) H_3PO_4 , P_2O_3 , $H_4P_2O_7$
- 4) H_3PO_3 , PH_3 , H_3PO_4

30

Ցինկի ձողն ընկումել են ծծմբական թթվի լուծույթի մեջ, որի հետևանքով ընթացել է՝ $Zn + 2H^+ = Zn^{2+} + H_2\uparrow$ ռեակցիան: Ո՞ր դեպքում կմեծանա այդ ռեակցիայի արագությունը, եթե ցինկի ձողը լուծույթում հպման մեջ դրվի բերված մետաղներից յուրաքանչյուրի հետ՝ ա) Mg , բ) Ag , գ) Al , դ) Cu , ե) Ni .

- 1) ա, բ, ե
- 2) բ, գ, դ
- 3) բ, դ, ե
- 4) գ, դ, ե

31

Տրված են ռեակցիաների հավասարումների ձախ մասերի ուրվագրեր: Ո՞ր ռեակցիան չի ընթանա.

- 1) $SiO_2 + CaO \xrightarrow{t^0}$
- 2) $Mg_2Si + HCl \xrightarrow{t^0}$
- 3) $SiO_2 + HCl \longrightarrow$
- 4) $SiO_2 + KOH \xrightarrow{t^0}$

(32-33) Երկու ածխաջրածինների գոլորշիների խառնուրդն արծաթի օրսիդի ամոնիակային լուծույթի հետ փոխազդում է մասնակիորեն, իսկ բրոմաջրածնի հետ ամրողացությամբ:

32

Ո՞ր նյութերը կարող են պարունակվել տրված նյութերի խառնուրդում.

- 1) բութաղիեն և բութան
- 2) էթին և պրոպան
- 3) էթիլեն և էթան
- 4) էթին և էթեն

33

Ո՞րն է համապատասխանում ածխածնի ատոմի հիբրիդային վիճակի փոփոխությանը, օրգանական նյութերի ելային խառնուրդն ավելցուկով վերցրած ջրածնով հիդրելիս.

- 1) $sp^2 \rightarrow sp^2$, $sp^2 \rightarrow sp^3$
- 2) $sp \rightarrow sp^3$, $sp^3 \rightarrow sp^2$
- 3) $sp \rightarrow sp^3$, $sp^2 \rightarrow sp^3$
- 4) $sp^2 \rightarrow sp^3$, $sp^2 \rightarrow sp$

34


Ո՞ր շարքում է ներկայացված փոխարկումների շղթայում պայմանների և անհրաժեշտ նյութերի ձիշտ հաջորդականությունը.



- 1) KOH(սպ.լ-թ), H₂SO₄(խխ, 180 °C), H₂O(H⁺)
- 2) KOH(ջր.լ-թ), H₂O(H⁺), H₂SO₄(խխ, 140 °C)
- 3) KOH(սպ.լ-թ), H₂O(H⁺), H₂SO₄(խխ, 140 °C)
- 4) KOH(սպ.լ-թ), H₂O(H⁺), H₂SO₄(խխ, 180 °C)

35

Համապատասխանեցրե՛ք քիմիական ռեակցիայի հավասարումը և մեխանիզմը.

Հավասարում	Մեխանիզմ
ա) 	1) իոնային պոլիմերում 2) ռադիկալային միացում 3) էլեկտրաֆիլ տեղակալում 4) ռադիկալային տեղակալում 5) էլեկտրաֆիլ միացում 6) պոկում
բ) CH ₂ =CH ₂ + Br ₂ → CH ₂ Br - CH ₂ Br	
գ) C ₂ H ₆ + Cl ₂ \xrightarrow{hv} C ₂ H ₅ Cl + HCl	
դ) CH ₃ CH ₂ CH ₂ Cl + KOH(սպիրտ) → CH ₃ CH=CH ₂ + KCl + H ₂ O	
ե) CH ₂ =CH-CH ₃ +HBr → CH ₃ -CHBr-CH ₃	

Ո՞ր շարքի բաղադրությունը պատասխաններն են ձիշտ.

- 1) ա3, բ5, զ4, դ6, ե5
- 2) ա3, բ2, զ4, դ6, ե5
- 3) ա3, բ5, զ1, դ2, ե4
- 4) ա2, բ5, զ4, դ3, ե6

36

Որո՞նք են քաց թողած բառերը համապատասխանաբար.

«Սպիրտներն ավելի թթուներ են, քան ջուրը: Դա կարելի է քացատրել ալկիլ ռադիկալների հատկությամբ, ըստ որի ալկիլ ռադիկալը վանում է C—O կապի էլեկտրոնային խտությունը դեպի թթվածնի ատոմ և O—H կապի բներայնությունը»:

- 1) ուժեղ, էլեկտրոնակցեալտոր, փոքրացնում է
- 2) թույլ, էլեկտրադոնոր, բարձրացնում
- 3) թույլ, էլեկտրադոնոր, փոքրացնում
- 4) թույլ, էլեկտրոնակցեալտոր, բարձրացնում է

37

Բութանի, պրոպանի և մեթիլամինի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի a է: Աղաթքու պարունակող սրվակի միջով անցկացնելուց հետո խառնուրդի հարաբերական խտությունն ըստ ջրածնի դարձավ b . Ո՞րն է a -ի և b -ի ձիշտ փոխհարաբերությունը.

- 1) $a > b$
- 2) $a >>b$
- 3) $a = b$
- 4) $a < b$

38


Ո՞ր շարքում են հետևյալ նյութերը դասավորված ըստ թթվային հատկությունների փոքրացման.

ա) Լթիլենօլիկոլ, բ) քացախաթթու, գ) մեթանոլ, դ) ֆենոլ, ե) քլորքացախաթթու:

- 1) ե, բ, ա, զ, դ
- 2) զ, ա, դ, բ, ե
- 3) ե, բ, դ, ա, զ
- 4) ե, զ, բ, ա, դ

39

Իրականացվել են հետևյալ փոխարկումները:



Որքա՞ն է B նյութի մոլեկուլում sp^2 հիբրիդային վիճակում գտնվող ատոմների թիվը և ո՞րն է D նյութը.

- 1) 0, ածուխ
- 2) 2, ծծումբ
- 3) 4, ֆոսֆոր
- 4) 4, ծծումբ

40

Քենօղային օղակ պարունակող ամինաթթվի 1 մոլը կարող է փոխազդել և՝ 2 մոլ նատրիումի, և՝ 2 մոլ նատրիումի հիդրօքսիդի, և՝ 1 մոլ քլորաջրածնի հետ: Այդ նույն ամինաթթվի 1 մոլի այրումից ստացվում է 9 մոլ ածխածնի(IV) օքսիդ: Ո՞րն է այդ ամինաթթվի անվանումը.

- 1) թիրոզին
- 2) ֆենիլալանին
- 3) լիզին
- 4) գլուտամինաթթու

41 Եթանի, ջրածնի և ացետիլենի այրման ջերմությունները համապատասխանաբար հավասար են 1560 կՎ/մոլ, 286 կՎ/մոլ և 1300 կՎ/մոլ: Որքա՞ն ջերմություն (կՎ) կանչառության մասնակցի 13 գ ացետիլեն:

42 Երկու տարբեր ռեակցիաներ 20 °C ջերմաստիճանում ընթանում են նույն արագությամբ ($V_1 = V_2$), իսկ 60 °C-ում՝ $V_1/V_2 = 16$: Ինչպիսի՞ն է γ_1/γ_2 ջերմաստիճանային գործակիցների հարաբերությունն այդ ռեակցիաների համար:

43 Ածխածնի (II) օքսիդի և մեթանի 50 դմ³ խառնուրդը պայթեցրել են 60 դմ³ թթվածնի հետ: Սկզբնական պայմանների բերելուց հետո ընդհանուր ծավալը կազմել է 70 դմ³: Որքա՞ն է մեթանի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

44

Կալիումի նիտրիտի 1 լ ջրային լուծույթում, որում աղի հիդրօլիզի աստիճանը 2 % է, հայտնաբերվել են 0,255 գ հիդրօքսիդ իոններ: Ստացված ալկալին ամբողջովին դիտցված է: Ի՞նչ զանգվածով (գ) չհիդրօլիզված աղ է պարունակվում 40 լ լուծույթում:

45

Էսթերացման ռեակցիայի համար տրված է եղել 1 լ զազային խառնուրդ՝ բաղկացած 40 մմոլ քացախաթթվից, 50 մմոլ էթանոլից և 1 մմոլ ծծմբական թթվից (որպես կատալիզատոր): Հավասարակշռություն հաստատվելուց հետո խառնուրդում հայտնաբերվել է 0,27 գ ջուր: (Համարել, որ ռեակցիայի հետևանքով խառնուրդի ծավալի փոփոխություն տեղի չի ունեցել): Տաքացման պայմաններում առավելագույնը ի՞նչ նյութաքանակով (մմոլ) նատրիումի հիդրօքսիդ կարող է փոխազդել ստացված հավասարակշռային խառնուրդի հետ:

- (46-47) Լիթիումի նիտրիդի և հիդրիդի խառնուրդը, որում լիթիում տարրի զանգվածային բաժինը 70 % է, մշակել են ջրով և անօստված գազային խառնուրդն անցկացրել տաքացրած պղնձի (II) օքսիդ պարունակող խողովակի միջով: Գազերի լրիվ փոխազդեցությունից հետո վերականգնման արդյունքում առաջացել է 512 գ զանգվածով պղինձ:

46

Որքա՞ն է եղել ելային խառնուրդի զանգվածը (q):

47

Ի՞նչ զանգվածով (q) ջուր է ստացվել ուսակցիաների ընթացքում:

- (48-49) Նորմալ պայմաններում երկու լիտր օդին ավելացրել են այնքան թթվածին, որ վերջինիս ծավալային բաժինը եռապատկվել է: Այնուհետև ստացված խառնուրդն անցկացրել են օգոնարարով: (Թթվածնի ծավալային բաժինը օդում ընդունել 20 %):

48 Որքա՞ն է ավելացրած թթվածնի ծավալը (լ):

49 Որքա՞ն է օգոնարարից դուրս եկած նոր խառնուրդում թթվածնի ծավալը (մլ), եթե այդ խառնուրդում ազոտի ծավալային բաժինը կրկնակի մեծ է օգոնի ծավալային բաժնից:

(50-51) Երկիմն թթվի 500 մլ ջրային լուծույթում հայտնաբերվել են $5,985\text{q}$ հիդրօքտնիում իռններ: Այդ լուծույթի չեզոքացման համար ծախսվել է 10% զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 1500 մլ լուծույթ ($\rho=1,12 \text{ g/cm}^3$):

50

Որքա՞ն է թթվի մոլային կոնցենտրացիան (մոլ/լ) լուծույթում:

51

Որքա՞ն է թթվի երկրորդ փուլի դիտցման աստիճանը (%), եթե առաջին փուլինը 20% է:

- (52-53) Փակ անոքում տեղակորել են ծծմբի(IV) օքսիդի և թթվածնի հավասարամոլային խառնուրդ: Համապատասխան պայմաններում որոշ ժամանակ անց ստեղծվել է $2SO_2 + O_2 \rightleftharpoons 2SO_3$ հավասարակշռություն, իսկ ճնշումն անոքում նվազել է 20 %-ով:

52

Որքա՞ն է հավասարակշռային գազային խառնուրդում ծծմբի(VI) օքսիդի ծավալային բաժինը (%):

53

Որքա՞ն է հավասարակշռային գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

- (54-55) Պատրաստել են նիկելի սուլֆատի 75°C ջերմաստիճանում հազեցած լուծույթ և այն սառեցրել մինչև 30°C : Անջատվել է $140,5$ գ բյուրեղահիդրատ, որում ջրածնի ատոմների թիվը 3-ով մեծ է թթվածնի ատոմների թվից: Անջուր աղի լուծելիությունը 75°C ջերմաստիճանում 60 գ է 100 գ ջրում, իսկ 30°C ջերմաստիճանում՝ 50 գ:

54

Որքա՞ն է բյուրեղահիդրատի 1 մոլում բյուրեղաջրի նյութաքանակը (մոլ):

55

Որքա՞ն է նիկելի սուլֆատի 75°C ջերմաստիճանում հազեցած լուծույթի զանգվածը (գ):

(56 - 58) Մազնեղիումի և պղնձի(II) քլորիդների հավասարամոլային խառնուրդը լուծել են 239 մլ ջրում և ավելացրել արծաթի նիտրատի 2 մոլ/լ կոնցենտրացիայով որոշակի ծավալով լուծույթ ($\rho = 1,1$ գ/մլ): Առաջացած 114,8 գ նստվածքը հեռացրել են և լուծույթի մեջ ընկղմել պղնձե թիթեղ: Ուեակցիան ավարտվելուց հետո թիթեղի զանգվածն ավելացել է 15,2 գրամով:

56

Որքա՞ն է քլորիդների ելային խառնուրդի զանգվածը (գ):

57

Որքա՞ն է պղնձե թիթեղը հանելուց հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

58

Որքա՞ն է վերջնական լուծույթում պղնձի(II) նիտրատի զանգվածային բաժինը (%):

(59 - 61) Շատ նոր ազոտական թթվի լուծույթի ($\rho = 1,05 \text{ g/mL}$) մեջ լուծել են $0,075 \text{ mL}$ մետաղական կալցիում և ստացել 375 mL լուծույթ, որում H^+ և NO_3^- իոնների գումարային քանակը կազմում է սկզբնական ազոտական թթվի լուծույթում առկա նույն իոնների ընդհանուր քանակի $72,5\%$ -ը: Ուեակցիայի ընթացքում լուծույթի ծավալի և խտության փոփոխությունն անտեսել:

59 Որքա՞ն է ազոտական թթվի զանգվածային բաժինը (%) սկզբնական լուծույթում:

60 Որքա՞ն է փոքր մոլային զանգվածով աղի զանգվածը (մգ) վերջնական լուծույթում:

61 F^- նշ ծավալով (մլ, ն. պ.) գազ (NO_2) կանջատվի նշված քանակով կալցիումի և և խիտ ազոտական թթվի փոխազդեցությունից:

- (62-64) Պղնձի(II) նիտրատի որոշակի զանգվածով նմուշը ենթարկել են ջերմային քայլայման մինչև հաստատուն զանգված, որի ընթացքում անջատվել է զագերի 33,6 լ (ն. պ.) խառնուրդ: Նույն զանգվածով այդ աղի նմուշ պարունակող 972 գ շրային լուծույթը ենթարկել են էլեկտրոլիզի (իներտ էլեկտրոդներով): Էլեկտրոլիզը դադարեցրել են այն պահին, երբ լուծույթում աղի քանակը պակասել է երեք անգամ:

62

Որքա՞ն է էլեկտրոդների վրա անջատված նյութերի զանգվածների գումարը (q):

63

Ի՞նչ զանգվածով (q) պինդ մնացորդ կստացվի աղի ջերմային քայլայումից:

64

Որքա՞ն է աղի զանգվածային բաժինը (%) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում:

(65-67) Մեկ $-NH_2$ և մեկ $-COOH$ խումբ պարունակող α -ամինաթթվից առաջացած 115,5 գ եռապեպտիդի հիմնային հիդրոլիզի հետևանքով ստացվել է 190,5 գ կալիումական աղ:

65

Որքա՞ն է ամինաթթվի մոլային զանգվածը (գ/մոլ):

66

Որքա՞ն է ծախսված կալիումի հիդրօքսիդի 21% զանգվածային բաժնով լուծույթի զանգվածը (գ):

67

Ի՞նչ քանակով (մմոլ) քլորաջրածին կծախսվի սկզբնական եռապեպտիդի թթվային հիդրոլիզն իրականացնելիս:

68

Համապատասխանեցրե՛ք նյութի անվանումը և գյուկողից դրա ստացման
եղանակը.

Անվանում	Ստացման եղանակ
ա) գյուկոնաթթու	1) օրսիդացում
բ) սորբիտ	2) էսթերացում
զ) պենտաացետիլգյուկոն	3) վերականգնում
դ) կաթնաթթու	4) խմորում
	5) հիդրովիզ
	6) հիդրատացում

69

**Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը քիմիական նյութերի
և դրանց բաղադրություններում առկա տարրերի ատոմների հատկությունների
վերաբերյալ.**

- 1) Ըստ հելիումի 20,25 հարաբերական խտություն ունեցող հալոգենաջրածնում առկա հալոգենի և նատրիումի առաջացրած միացությունը օգտագործում են որպես նյարդային համակարգը հանգստացնող դեղամիջոց:
- 2) ^{146}Gd իզոտոպի կիսատրոման պարբերությունը 10 օր է: 720 ժամի ընթացքում տրոհվում է ^{146}Gd -ի 75 %-ը:
- 3) 99900 գ/մոլ միջին մոլային զանգվածով բութաղինային կառուցուկի պոլիմերման աստիճանը 1850 է:
- 4) Կատալիստիկ կրեկինգը իրականացվում է ցանկացած մետաղի առկայությամբ:
- 5) Հրամետաղարտադրական եղանակով մետաղների ստացման համար կիրառվում են հետևյալ նյութերը՝ H_2 , C , CO , SO_3 , Al :
- 6) Fe^{2+} իոնի հայտաբերման որակական ռեակցիայի կոճատ իոնային հավասարումն է $3\text{Fe}^{2+} + 2[\text{Fe}(\text{CN})_6]^{3-} = \text{Fe}_3[\text{Fe}(\text{CN})_6]_2$.

70

Ածխածնի (TV) օքսիդից և անհայտ ածխաջրածնից կազմված 0,8 լ գազային խառնուրդին ավելացրել են 2 լ թթվածին (ավելցուկով) և այրել: Ստացվել է 2,6 լ գազագոլորշային խառնուրդ, որը խիստ ծծմբական թթվի միջով անցկացնելիս ծավալը դարձել է 2,2 լ: Վերջինս նատրիումի հիդրօքսիդի լուծույթի միջով անցկացնելուց հետո մնացել է 1 լ գազ:

- 1) Ածխաջրածնի հարաբերական մոլեկուլային գանգվածը 26 է:
- 2) Զրային գոլորշու ծավալային բաժինը գազագոլորշային խառնուրդում մոտ 15,38 % է:
- 3) Այրմանը մասնակցած թթվածնի ծավալը 1,2 լ է:
- 4) Այդ ածխաջրածնի լրիվ հիդրման համար անհրաժեշտ է 0,8 լ ջրածն:
- 5) Այդ ածխաջրածնը չի փոխազդում արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթի հետ:
- 6) Ստացված 2,2 լ ծավալով գազային խառնուրդը 20 % գանգվածային բաժնով 300 գ նատրիումի հիդրօքսիդի լուծույթով անցկացնելիս առաջանում է երկու աղերի խառնուրդ:

